Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
սեպտեմբերի 3-ի N 567 – Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Տաշիր քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների իրականացում, հաշվի առնելով գործող մշակույթի տան անմխիթար վիճակը և նոր ու ժամանակակից, բազմաֆունկցիոնալ մշակույթի տան անհրաժեշտությունը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, մշակույթի բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	330,500,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզ, Տաշիրի քաղաքային համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. նախագծային աշխատանքների իրականացում՝ 2,500,000 դրամ 2. ներքին և արտաքին հարդարման, կահավորման աշժատանքներ՝ 325,000,000 դրամ 3. կազմակերպչական ծախսեր բեռնափոխադրումներ իրականացնելու համար՝ 3,000,000 դրամ Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 30.12.2019 թ.

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալվում է ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական նյութերի և ապրանքների ձեռքբերման դիմաց հարկային արտոնություններ՝ 1. դռների, պատուհանների, վիտրաժների պատրաստում և տեղադրում՝ 22,000,000 դրամ. 2. տանիքի վերակառուցման աշխատանքներ՝ 2,100,000 դրամ. 3. ինժեներական համակարգերի կառուցում և մանտաժում՝ 5,500,000 դրամ. 4. ներքին վերանորոգման և կահավորման աշխատանքներ՝ 25,400,000 դրամ. 5. արտաքին հարդարման աշխատանքներ՝ 3,000,000 դրամ. 6. նախագծային և դիզայներական աշխատանքների իրականացում՝2,500,000 դրամ. 7. շինարարական նյութերի և ապրանքների ձեռք բերում՝ 267.000.000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսվում է 3,000,000 դրամի չափով բեռնափոխադրումներ իրականացնելու համար:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաքի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ